

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**«ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՄ «ՆԱՄԱՆԵՐՈՒՄ ՆԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 19-Ի ՈՐՈՇՄԱՆ 8-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

19 հոկտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նայասարանի Նանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Նամաներում հայտարարելու մասին» Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 11.06.2010թ. սահմանադրական դատարանում մուրքագրված թիվ 4-170 եւ 4-171 դիմումներն են:

Սահմանադրական դատարանը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 39-րդ հոդվածով, իր` 2010թ. հունիսի 18-ի ՍԴԱՌ-67 աշխարակարգային որոշմամբ ՆՏ վճռաբեկ դատարանի ՎԴ1-Ե4684 եւ ՎԴ1-Ե4685 դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել է` որոշելով դրանք քննել դատարանի նույն նիստում: Սահմանադրական դատարանի 2010թ. հուլիսի 20-ի ՍԴԱՌ-81 աշխարակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել է եւ նշանակվել 19.10.2010թ.:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, դատական գործերը, հետազոտելով «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է 2009 թվականի հունիսի 19-ին, ՆՏ Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվել` 2009 թվականի հունիսի 19-ին եւ ուժի մեջ մտել 2009 թվականի հունիսի 20-ին:

«Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի որոշման վիճարկվող 8-րդ կետի երկրորդ ենթակետը սահմանում է. «Նամաներումը չկիրառել ... այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ նշանակված պարտազատի կրճատվել է, կամ որոնք դիտարկությանը կարգադրված հանցագործության համար պարտավոր կրելուց ազատվել են ներում շնորհելու մասին Նայասրանի Նանրապետության Նախագահի հրամանագրերով կամ Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, կամ որոնց նկատմամբ դիտարկյալ հանցագործություն կարարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, եւ կրկին կարարել են դիտարկյալ հանցագործություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարտից հետո անցել է 10 փարի»:

2. Նախկինում համաներման հիմքով պարասխանավությունից ազատված քաղաքացիներ Ա. Սիմոնյանի եւ Ա. Դալլաբյանի նկատմամբ համապարասխանաբար Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշմամբ եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. օգոստոսի

18-ի որոշմամբ կիրառվել է «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշումը: Գեղարքունիքի մարզի եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դափարանների նշված որոշումները բողոքարկվել են ՆՏ գլխավոր դափարախազի տեղակալի կողմից: ՆՏ վերաքննիչ քրեական դափարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումներով վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ առաջին ափյանի դափարանների որոշումները թողնվել են օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դափարանի որոշումները ՆՏ գլխավոր դափարախազի տեղակալի կողմից բողոքարկվել են ՆՏ վճռաբեկ դափարան:

Վերաքննիչ բողոքներում ՆՏ գլխավոր դափարախազի տեղակալը գրել է, որ ՆՏ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 2009թ. հուլիսի 21-ի եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դափարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշումներն անհիմն են ու ենթակա են բեկանման, քանի որ դրանցով թույլ է տրվել դափարական սխալ: Շեշտվում է, որ Արմեն Սիմոնյանի նկատմամբ 01.09.2006թ. ՆՏ ԱԱԾ-ի կողմից որոշում է կայացվել համաներման ակտի հիմքով քրեական գործը կարճելու մասին, իսկ Արմեն Դալլաքյանի նկատմամբ նույն հիմքով 2003թ. հունվարի 15-ին ՆՏ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից քրեական գործի հարուցումը մերժվել է: Դափարախազությունը գրել է, որ երկու դեպքում էլ առաջին ափյանի դափարաններն այս հանգամանքները հաշվի չեն առել եւ չեն կիրառել «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումները՝ համաներումը չկիրառելու հիմքերի առնչությամբ:

Նամաձայն քրեական գործերի նյութերի՝ երկու դեպքում էլ ՆՏ վերաքննիչ քրեական դափարանը նույնաբնույթ որոշում է կայացրել՝ մերժելով վերաքննիչ բողոքները՝ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «...անձի նկատմամբ դափարվածությունը կարող է մարվել կամ հանվել միայն վերջինիս նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դափարական ակտի /մեղադրական դափարվածի/ առկայության պայմանում»: Եվ քանի որ Արմեն Սիմոնյանի եւ Արմեն Դալլաքյանի նկատմամբ «...մեղադրական դափարվածի առկա չէ եւ դափարվածությունը մարելու խնդիր առաջանալ չի կարող, որպեսզի հանգամանքը ...համաներումը չկիրառելու հիմք համարվել չի կարող, հետեւաբար ընդհանուր իրավասության դափարանի դափարական ակտը բեկանելու եւ փոփոխելու հիմքեր չկան»: Փաստորեն, առաջին եւ վերաքննիչ ափյաններում դափարական պրակտիկան հիմք է ընդունել այն կանխադրույթը, որ եթե անձը դափարվածություն չունի, ապա նրա նկատմամբ համաներման սահմանափակումներ չեն կարող լինել:

3. Դիմող կողմն առաջադրում է իրավական երկու խնդիր.

**նախ՝** եթե «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համապեքսպում համաներում կիրառելու արդյունքում անձը դատվածություն չունի, ապա նրա նկատմամբ համաներում պեքք է քարաձվի, թե՛ ոչ, եւ արդյո՞ք այդ իրավանորմի ձեւակերպումը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա իրավական ակերին ներկայացվող որոշակիության եւ կանխաքեսելիության պահանջներին,

երկրորդ՝ նշվաձ անձանց նկատմամբ համաներում չկիրառելու դեպքում չի՞ խախտվի, արդյոք, ՆՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվաձը, որի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ:

Դիմող կողմը «Նամաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների առնչությամբ գրնում է, որ համաձայն առկա իրավակարգավորման՝ «... եթե անձը չի առարկում կիրառել համաներումը, որի արդյունքում նրա նկատմամբ քեռական հեքապնդում չի իրականացվում, կամ կարձվում է քեռական գորձը եւ արդյունքում նա չի ունենում դատվաձություն, ապա այդ անձը գրկվում է հեքազայում իր նկատմամբ համաներում կիրառելու հնարավորությունից: Իսկ եթե նույն հանցանքը կատարաձ անձը համաներում կիրառելու դեմ առարկում է եւ դատապարքման արդյունքում ունենում է դատվաձություն, ապա նրա դատվաձությունը մարելուց 10 քարի անցնելուց հեքո նրա նկատմամբ համաներումը կիրառվում է»: Ըստ դիմողի՝ «Փաստորեն նույն դիքավորյալ հանցագորձությունը կատարաձ անձինք, որոնց նկատմամբ նախկինում կիրառվել է համաներում, կրկին դիքավորյալ հանցագորձություն կատարելիս հայքնվում են անհավասար վիձակում, որի արդյունքում խախտվում է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկգբունքը»:

Դիմողի կարձիքով՝ քննարկվող որոշման վիձարկվող դրույթներն առերեույթ հակասում են ՆՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվաձին, քանի որ «Նամաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի երկրորդ ենթակետի ձեւակերպման պայմաններում հնարավոր չէ ապահովել **օրենքի առջեւ բոլորի հավասարությունը, իրավական ակքի որոշակիությունը եւ կանխաքեսելիությունը**: Դիմողի պնդմամբ՝ համաներման չկիրառումն այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ դիքավորյալ հանցագորձության համար քեռական հեքապնդում չի իրականացվել, կամ քեռական գորձերը կարձվել են ՆՏ ԱԺ համաներման մասին նախկին որոշումներով, կդիքվի

որպես իրավական ակտի փարածական մեկնաբանում եւ կհանգեցնի նրանց սահմանադրական իրավունքների խախտման: Միաժամանակ դիմողը գրնում է, որ «...դաբվածությունը մարելուց հետո 10 փարի անցնելն անալոգիայով (համանմանությամբ) չի կարելի փարածել նաեւ այն անձանց վրա, որոնց նկատմամբ դիբարավորյալ հանցագործության համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են ՆՆ Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, քանի որ դա ակնհայտորեն կհակասի «Իրավական ակտերի մասին» ՆՆ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին»: Ըստ դիմողի՝ դա կհակասի նաեւ նույն օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, որի համաձայն՝ անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են ֆիզիկական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարավորություն կամ պարասխանավորություն:

4. Ըստ պարասխանողի՝ ՆՆ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասին համապարասխան՝ դիբարավորյալ հանցագործության համար քրեական հետապնդում չհարուցելու, կամ քրեական գործով վարույթը կարճելու դեպքում դաբվածություն չի կարող առաջանալ, ուստի եւ՝ «Նամաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կերի 2-րդ ենթակերտով սահմանված բացառությունն այս դեպքերի վրա չի կարող փարածվել:

Պարասխանողը գրնում է, որ հիմնավորված չէ նաեւ դիմողի մոբեցումն առ այն, որ վիճարկվող իրավանորմի ձեւակերպումը հակասում է իրավական ակտին ներկայացվող որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին: Նանդիսանալով իրավական ակտերի պարպադիր հարկանիշ՝ իրավական որոշակիությանը ներկայացվող պահանջները չեն կարող նույն կերպ փարածվել նաեւ համաներման ակտի վրա, քանզի անձը հանցանք կարարելու պահին չի կարող եւ չպերք է կանխատեսի համաներման ակտի ընդունման հնարավորությունը: Անձի վարքագիծը հիմնվում է կանխատեսելի եւ խիստ որոշակի քրեական օրենսգրքի վրա, սակայն հանցագործությունը կարարելուց հետո նա չի կարող եւ չպերք է կանխատեսի համաներման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է վիճարկվող նորմի առնչակցությանը ՆՆ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, ապա այս կապակցությամբ պարասխանողը գրնում է, որ համաներումն արպադարական ակտ է, որի կիրառման օրենսդրական հիմքերը նախատեսված չեն: Այսինքն՝ հարցի կարգավորումն ամբողջությամբ թողնված է պերական իշխանության բարձրագույն մարմնի հայեցողությանը: Յուրաքանչյուր

ղեպքում օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես համաներում հայտարարելու նպատակահարմարության եւ հանցանք կատարած անձանց շրջանակի որոշումը, այնպես էլ համաներման կիրառման պայմանների եւ բացառությունների սահմանումը: Կոնկրետ հանցագործությունների եւ հանցանք կատարած անձանց շրջանակի, համաներման կիրառման պայմանների եւ բացառությունների սահմանումը չի կարող դիտվել ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով երաշխավորված սահմանադրական սկզբունքի խախտում: ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը խտրականությունն արգելում է դրանում նշված հիմքերից որեւէ մեկով: Նշված հոդվածը, չսահմանափակվելով խտրականությունն արգելող հիմքերի սպառիչ ցանկով, խտրականությունն արգելում է նաեւ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով: Դրանք վերաբերում են բացառապես անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներին, ուստի եւ՝ համաներման ակտի հիմքում ընկած չափանիշների վրա տարածվել չեն կարող:

Վերոնշյալ հիմնավորումներով պարասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:

**5.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանի մտահոգությունը «Նամաներում հայտարարելու մասին» ՏՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի առկա ձեւակերպման, հարկապես բացառության մասի, առնչությամբ՝ հիմնավոր է, եւ նման ձեւով այն կիրառելու պարագայում կարող է խտրական իրավիճակ ստեղծվել: Այս հարցում, ըստ գործի նյութերի, փարակարծություն չի արտահայտել նաեւ ՏՏ դատախազությունը: Վերջինիս հարցադրումն այն է, որ իրավական ակտով նախատեսված սահմանափակումները հաշվի չեն առնվել:

Միաժամանակ, ակնհայտ է, որ համաներման ակտն ընդունողի հայեցողական լիազորությունը կարող է իրացվել միայն իրավաչափ լուծումների ու ՏՏ Սահմանադրության հիմնարար սկզբունքների շրջանակներում՝ բացառելով նաեւ խտրականության որեւէ դրսեւորում: Վիճարկվող նորմն ունի հասցեատերերի հիմնականում երկու խումբ, այն է՝ անձինք, ում նկատմամբ համաներումը նախկինում կիրառվել է նախաքննության փուլում, եւ անձինք, ում նկատմամբ համաներումը կիրառվել կամ ներում է շնորհվել մեղադրական դատավճռի կայացումից հետո: Վիճարկվող նորմի կարգավորման առարկայի տեսանկյունից այս երկու խումբ անձինք համանման իրավիճակում են, քանի որ նրանց համար ընդհանուր է այն իրավակարգավորումը, որը հիմք է հանդիսանում նրանց նկատմամբ համաներումը

չկիրառելու համար՝ ելնելով արդեն մեկ անգամ պեպույթյան մարդասիրական վերաբերմունքից օգտված լինելու փաստից:

Սակայն նշյալ անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող հարցերի իրավակարգավորման շրջանակներում նրանց նկատմամբ կարող է փարբերակված մոպեցում դրսևուրվել միայն օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացման դեպքում:

Վիճարկվող նորմում օրենսդրի վերաբերմունքն այդ անձանց նկատմամբ արտահայտվում է երկու հիմնական հարցի իրավակարգավորման առնչությամբ.

ա/ այն անձանց շրջանակը որոշելիս, ում նկատմամբ համաներման ակտը չի կիրառվում,

բ/ համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառություն սահմանելիս:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը չկիրառելով ե՛ն նախկինում նախաքննության փուլում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ, ե՛ն համաներման կամ ներման հիմքով պատժից մասամբ կամ ամբողջությամբ ազատված դատապարտյալների նկատմամբ՝ օրենսդիրը գործել է օրենքի առջև բոլորի հավասարության եւ խտրականության արգելման սկզբունքին համահունչ՝ ապահովելով նույնական վերաբերմունք համանման իրավիճակում գտնվող անձանց առնչությամբ: Մինչդեռ նույն հետետողականությունը չի դրսևուրվել համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառությունը նման ձեւով սահմանելիս եւ «...որոնց նկատմամբ դիտարկվող հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել» դրույթը սույն իրավակարգավորման համարաբարություն ներկայացնելիս:

Այսուհանդերձ, քննության առարկա գործով խնդիրը վերաբերում է կոնկրետ քրեական գործերի լուծմանը եւ դրանց շրջանակներում կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հարց առաջադրելուն: Այս համարաբարություն ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 71-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքերով սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետեւյալ պարճառաբանությամբ.

**առաջին՝** «Համաներում հայտարարելու մասին» ՆՏ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները՝ անկախ բացառության պարագայից, միանշանակ նախատեսում են, որ համաներում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, «...որոնց նկատմամբ դիտարկվող հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը

կարճվել են Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով»: Նույն կետով նախատեսված բացառությունը՝ «...բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի», **նախ**՝ չի վերաբերում այն անձանց, որոնց նկատմամբ դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, **եւ ապա**՝ չի վերաբերում նաեւ սահմանադրական դատարան վճռաբեկ դատարանի դիմումների ներկայացման համար առիթ հանդիսացած քրեական գործերին, քանի որ բացառությունը հստակ ժամկետային սահմանափակում ունի: Անկախ բովանդակային մեկնաբանություններից, նշված քրեական գործերով Արմեն Սիմոնյանի նկատմամբ նախորդ համաներումը կիրառվել է վերջին համաներումից 3 տարի առաջ, իսկ Արմեն Դավաթյանի նկատմամբ՝ 6 տարի առաջ: Ներեւաբար, քրեական գործերի լուծումը ՆՆ վճռաբեկ դատարանի կողմից պայմանավորված չէ նշված բացառությամբ,

**երկրորդ**՝ ՆՆ վճռաբեկ դատարանն ըստ էության վերացական վերահսկողության կարգով է բարձրացնում վեճի առարկա դրույթի սահմանադրականության հարցը, որի իրավասությունը նախատեսված չէ ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 71-րդ հոդվածով: Վերջինիս 1-ին մասով սահմանված է, որ դատարանները կարող են սահմանադրական դատարան դիմել նորմատիվ ակտի այն դրույթների սահմանադրականության հարցով, «...որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով», իսկ համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ դիմողը պետք է հիմնավորի, որ «...այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործերի լուծման առումով իրավական որեւէ անորոշություն առկա չէ: Ինչպես նշվեց, «Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետում հստակ սահմանված է, որ համաներում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, «...որոնց նկատմամբ դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով»: Նման իրավիճակը դատվածության հանգամանքի հետ որեւէ առնչություն չունի: Իսկ բացառության քննարկումն այս գործերի լուծման համար էքսպրտում որեւէ գործնական իրավական հետեւանք ունենալ չի կարող, քանի որ այդ դրույթը թե՛ սահմանադրական եւ թե՛ հակասահմանադրական ճանաչելու



ղեպքում, միեւնույն է, «Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը կբացառի վերոնշյալ հիմքերով համաներման կիրառումը: **Ընդ որում, դատական պրակտիկայում չի կարող ենթադրվել, որ եթե համարժեք բացառություն նախատեսված չէ, ապա նախատեսված սահմանափակումը կիրառելի չէ**, ինչը քննության առարկա քրեական գործերի շրջանակներում փեղ է գտել առաջին արյանի եւ վերաքննիչ դատարանների մոտեցումներում,

**երրորդ`** ՆՆ վճռաբեկ դատարանի առաջադրած 1-ին հարցի պարասխանը՝ «եթե «Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան համաներում կիրառելու արդյունքում անձը դատվածություն չունի, ապա նրա նկատմամբ համաներում պետք է փարաձվի, թե՛ ոչ, եւ արդյո՞ք այդ իրավանորմի ձեւակերպումը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա իրավական ակտին ներկայացվող որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին», կարող է փրվել իր իսկ իրավագործության շրջանակներում,

**չորրորդ`** բարձրացվում է այնպիսի իրավական ակտի նորմի սահմանադրականության խնդիր, որը, նորմատիվ ակտ լինելով հանդերձ, ունի էական լուրջ առանձնահատկություն՝ այն առնչվում է կոնկրետ անձանց ու կոնկրետ իրավիճակների, օբյեկտիվ իրավունքի պաշտպանության խնդիրներ չի լուծում: Մինչդեռ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում փվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով: Նեպտաբար, դատական պրակտիկան չի կարող անտեսել փվյալ կոնկրետ գործին առնչվող այնպիսի հանգամանքներ, որոնք վերաբերում են համաներումը կիրառելու սահմանափակումներին (օրինակ՝ ՆՆ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 2009թ. հուլիսի 21-ի որոշման հիմքում դրել է «Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի եւ 12-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի դրույթները՝ առանց անդրադարձ կատարելու նույն որոշման 8-րդ կետին, եզրահանգելով, որ «...բացակայում են համաներումը կիրառելու սահմանափակումները»): Այս հարցի շուրջ ծագած վեճն իրավական նորմի կիրառման եւ ոչ թե սահմանադրականության խնդիր է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդ-

վածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Նայաստանի Նանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Նամաներում հայտարարելու մասին» Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 հոկտեմբերի 2010 թվականի  
ՍԴՈ-921